# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոյանի, Թամարա Բաղդասարյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Դավիթ Մելքոնյանի, Դավիթ Վարդիկյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մարինե Ֆարմանյանի,,

քննության առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին հարցը,

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

Պալատի խորհրդի 04.05.2023 թվականի թիվ 11/5-Ա որոշմամբ կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) կառավարման խորհուրդ՝ մինչև 2026 թվականի մայիսի 4-ը ներառյալ պաշտոնավարման ժամկետով:

*«Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝* **կառավարման խորհուրդը կազմավորվում է երեք տարի ժամկետով՝ յոթ անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.**

***1) Փաստաբանների պալատի նախագահը՝ ի պաշտոնե.***

***2) Փաստաբանների պալատի ընտրած երեք փաստաբան.***

***3)Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.***

***4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:***

**05 մայիսի 2026թ.**
**թիվ 09/12-Ա**

ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել ՀՀ արդարադատության նախարարի 03.04.2026թ. (մուտք՝ 825-2026) գրությունը, որով առաջարկվել է Արդարադատության նախարարի խորհրդական Ներսես Զեյնալյանի թեկնածությունը:

Պալատի խորհրդի 05.05.2026թ. թիվ 9/11-Լ որոշմամբ ի.գ.թ. Հասմիկ Ստեփանյանը և ի.գ.դ., պրոֆեսոր Նազելի Սուքիասյանը ընտրվել են որպես ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի անդամներ:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջադրելու կառավարման խորհրդի՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված անդամի թեկնածու՝ վերջինիս համաձայնությամբ: Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է քվեարկել ոչ ավելի, քան երկու մասնակցի օգտի: Ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:*

Խորհրդի նախագահի կողմից որպես Կառավարման խորհրդի փաստաբան անդամներ առաջարկվել են Մարտուն Փանոսյանի (արտոնագիր № 986) թեկնածությունը խորհրդի անդամ Ռոման Ահարոնյանի կողմից, Ինեսսա Պետրոսյանի (արտոնագիր № 20) թեկնածությունը խորհրդի անդամ Արսեն Հարությունյանի կողմից և Տարոն Սիմոնյանի (արտոնագիր № 1092) թեկնածությունը խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի կողմից:

Օրենքի 45.4-րդ հոդվածի 7-րդ մասի քվեաթերթիկներով կատարված քվեարկության համաձայն Խորհրդի անդամների կողմից ընտրվեցին փաստաբաններ՝

- Մարտուն Փանոսյանը.
- Ինեսսա Պետրոսյանը.
- Տարոն Սիմոնյանը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհուրդ կազմավորելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 21-րդ կետի և 45.4-րդ հոդվածի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 47-րդ և 48-րդ ենթակետերով, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրության 34-րդ և 35-րդ կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը,

## ՈՐՈՇԵՑ՝

***1. Փաստաբաններ Մարտուն Փանոսյանին (արտոնագիր № 986), Ինեսսա Պետրոսյանին (արտոնագիր № 20) և Տարոն Սիմոնյանին (արտոնագիր № 1092) ընտրել որպես «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհրդի***

*փաստաբան անդամներ:*

*2. Կազմավորել և հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհուրդը՝ հետևյալ կազմով.*

1) *Սիմոն Բաբայան՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, ի պաշտոնե (արտոնագիր № 55).*
2) *Մարտուն Փանոսյան (արտոնագիր № 986).*
3) *Ինեսսա Պետրոսյան (արտոնագիր № 20).*
4) *Տարոն Սիմոնյան (արտոնագիր № 1092).*
5) *Հասմիկ Ստեփանյան՝ իրավաբան գիտնական (ի.գ.թ.).*
6) *Նազելի Սուքիասյան՝ իրավաբան գիտնական (ի.գ.դ., պրոֆեսոր).*
7) *Ներսես Զեյնալյան՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ:*

*3. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհուրդը կազմավորվում է երեք տարի ժամկետով և գործում է 2026 թվականի մայիսի 5-ից մինչև 2029 թվականի մայիսի 5-ը (ներառյալ):*

*4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի նորընտիր անդամներին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

**05 մայիսի 2026թ.**
**թիվ 09/12-Ա**
**ք. Երևան**